ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1961 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի դահլիճում, դասախոսեց ամերիկահայ մտավորական, Բոստոնի «Պայքար» թերթի խմբագիր պր. Անդրանիկ Անդրեասյանը, «Հայ եկեղեցվո դերը մեր պատմության ընթացքինում նյութի շուրջ։

Հարգելի դասախոսը զեկուցեց Հայ եկեղեցու կատարած ազգանվեր և եկեղեցաշեն դերի մասին, մեծապես շնորհակալ թողնելով ներկաներին,

Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ,, ԿԻՐԱԿԻ, Երևանի Ս. Սարգիս Եկեղեցում պատարագեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, բնաբան ունենալով «Այլ օրինակ լիշիր հաւատացելոց բանիւք, դնացիւք, հաւատով և սիրով»։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, տոն «Սրբոյն Ստեփանոսի նախավկային և առաջին մարտիրոսինն։ Այսօր տոնն է նաև Մայր Աթոռի սարկավագների։

Մայր Տաճարում պատարագեց և «Ստեփանոս այր իմաստունն» բնաբանով քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Մայր Աթոռի սարկավագներին և Հոգևոր Ճեմարանի ուսանողներին տալով գեղեցիկ խրատներ, նմանվելու համար Ս. Ստեփանոսին, որպես տիպար սարկավագի։

Հավարտ սուրբ պատարագի, սարկավագները բարձրացան Վեհարան և Վեհափառ Հայրապետի Աչը համբուրելով ստացան նրա օրհնությունները։

Ժամը 3-ին, Ճեմարանի սեղանատանը, ի պատիվ սարկավագների, տրվեց ճաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմը, ուսանողությունը և վանքի պաշտոնեությունը։

Ճաշի ժամանակ բարեմաղթության խոսքեր ասացին գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Ներսես աբեղան, պր. Ա. Հատիտյանը, պր. Գ. Գյուլյանը և պր. Ս. Անթոսյանը։ Սարկավագների անունից պատասխան խոսք ասաց բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31—ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

1962 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ԿԱՂԱՆԴ ԵՎ ՏԱՐԵՄՈՒՏ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը՝ «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քոյ բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք, որից հետո հավատացյալները համբուրեցին Վեհափառ Հայրապետի Ս. Աչը և ստացան նրա օրհնությունները։

Վեհափառ Հայրապետին թափորով Վեհարան առաջնորդելուց հետո, գերաշնոր-

Տ. Սահակ արքեպիսկոպոսը, հանուն Մայր Աթոռի միաբանության, շնորհավորեց Վեհափառ Հայրապետի նոր տարին։

❋❋❋

ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «Ճրագալույց Սենդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Ճրագալույցի սուրբ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց նախատոնակ։

Ապա, Վեհափառ Հայրապետը թափորով, «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականի երգակցությամբ առաջնորդվեց Վեհարան, որտեղ ընթերցվեց Սենդյան Ավետարանը։

Երեկոյան, վանքի սեղանատանը, տրվեց խթման ավանդական ճաշկերույթ։

❋❋❋

ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «յիշատակ մեռելոց»։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պողապայանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի տեղի ունեցավ Հոգեհանգստյան պաշտոն «վասն համբրէն ննջեցելոց»։